05.04.2021
347-35

ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
նախագահ Տաթևիկ Ռևազյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Ռևազյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել քաղաքացի Հարություն Ծատրյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Քաղաքացին 2021 թվականի մարտի 20-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ, որը վերահասցեագրվել է Քաղաքացիական ավիացիայի կոմիտե և մուտքագրվել մարտի 22-ին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացվել:

Ուստի ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել մրցույթի կարգի մասին հետևյալ տեղեկությունները.

1. Ս. թ. փետրվարի 3-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ «Երբ Ռուսաստանի հետ չվերթները բացվեց, առաջին օրը ավելի շատ մարդ եկել է, քան գնացել» (աղբյուրը՝ https://armenpress.am/arm/news/1042273.html):) Ինչպիսի՞ դինամիկա է գրանցվել Ռուսաստանի հետ չվերթները բացելուն հաջորդող ժամանակահատվածում՝ մարտի 31-ը ներառյալ:
2. Քանի՞ ՀՀ քաղաքացի է ՀՀ-ից մեկնել Ռուսաստանի Դաշնություն 2021 թվականի փետրվարի 1-ից մարտի 31-ը ներառյալ:
3. Քանի՞ ՀՀ քաղաքացի է Ռուսաստանի Դաշնությունից եկել ՀՀ 2021 թվականի փետրվարի 1-ից մարտի 31-ը ներառյալ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836,
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am